**Վարկավորման պայմաններ**

**Evoca և TESLA ENERGY**

<table>
<tr><td>Ովքեր կարող են դիմել</td><td colspan="2">18 – 63 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 63 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու</td></tr>
<tr><td>Վարկավորման արժույթը</td><td colspan="2">ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>Վարկավորման գումար</td><td colspan="2">4,000,000 - 50,000,000</td></tr>
<tr><td>Վարկի մարման ժամկետը</td><td colspan="2">• Հաստատուն տոկոսադրույքի դեպքում՝ 36 - 60 ամիս<br>• Լողացող տոկոսադրույքի դեպքում՝ 61 - 84 ամիս</td></tr>
<tr><td>Վարկի մարման ժամանակացույց</td><td colspan="2">• Անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ)<br>• Զսպանակաձև (մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ), վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով</td></tr>
<tr><td>Վարկի ձևակերպման վայր</td><td colspan="2">• Ընկերության գործունեության վայր (առցանց վարկավորման համակարգի միջոցով)<br>• Բանկ (վարկային մասնագետի կողմից)</td></tr>
<tr><td rowspan="2">Տարեկան տոկոսադրույք</td><td>Անվանական</td><td>Առավելագույն փաստացի</td></tr>
<tr><td>14.5%</td><td>15.89%</td></tr>
<tr><td>Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք</td><td colspan="2">Տուգանք չի կիրառվում</td></tr>
<tr><td>Վարկի վերադարձելիության ապահովման միջոց</td><td colspan="2">• Ձեռք բերվող տրանսպորտային միջոցը<br>• Որպես վաճառքի և գրավադրման արժեք հիմք է ընդունվում Ընկերության կողմից Բանկի էլեկտրոնային համակարգում կամ ներկայացված տեղեկանքում նշված արժեքը<br>• Վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնող լիազոր մարմնի որոշմամբ կարող է պահանջվել ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորությունների առկայություն</td></tr>
<tr><td rowspan="2">Կանխավճար</td><td>Եկամուտների վերլուծությամբ</td><td>Նվազագույնը՝ 10%</td></tr>
<tr><td>Առանց եկամուտների վերլուծության</td><td>Նվազագույնը՝ 40%</td></tr>
<tr><td>Վարկի տրամադրման եղանակը</td><td colspan="2">Անկանխիկ</td></tr>
<tr><td>Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ</td><td colspan="2">• Ավտոմեքենայի ձեռքբերման և գրավադրման հետ կապված պետական իրավասու մարմնում գրանցման վճարներ<br>• Շարժական գույքի գրավի հաստատման (ձևակերպման) միջնորդավճար համաձայն Բանկում գործող ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅՔՆԵՐ-ի: Առցանց վարկավորման համակարգի միջոցով տրամադրվող վարկերի դեպքում նշված միջնորդավճար չի կիրառվում</td></tr>
<tr><td>Ապահովագրություն</td><td colspan="2">Տրանսպորտային միջոցի ԿԱՍԿՈ ապահովագրությունը կնքվում է յուրաքանչյուր տարի վարկի ամբողջ ժամկետի ընթացքում, վարկի մայր գումարի մնացորդի չափով, Բանկի կողմից և Բանկի հաշվին</td></tr>
</table>